

ՀԱՅԱՍՏԱՆ

Հիմնական պայմաններ և մարտահրավերներ

Այնուամենայնիվ, 2022 թ. մարտի 13-ի դրությամբ լիարժեք պատվաստված էր չափահաս բնակչության 43 տոկոսը:

Ցածր գնաճի տևական ժամանակահատվածից հետո գների մակարդակը 2020 թ. վերջին բարձրացավ և 2021 թ. բարձր պահպանվեց: Գնաճը նոյեմբերին հասավ գագաթնակետին՝ 9.6 տոկոսի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նախքան 2022 թ. փետրվարին մինչև 6.5 տոկոսի նվազելը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ: 2021 թ. նոյեմբերին սննդամթերքի գնաճը հասավ գագաթնակետին՝ 17 տոկոսի, ինչին էլ բաժին ընկավ ընդհանուր գնաճի երկու-երրորդը: Ի պատասխան դրա, ՀՀ կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) 2020 թ. դեկտեմբերից 2022 թ. մարտը վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույթն ինն անգամ գումարյալ 500 բազիսային կետով բարձրացրեց:

Բյուջեի դեֆիցիտը նվազեց՝ 2020 թ. ՀՆԱ-ի 5.1 տոկոսից 2021 թ. կազմելով 4.3 տոկոս: Եկամուտները նախորդ տարվա նկատմամբ 8 տոկոսով ավելացան՝ ավելի բարձր ԱԱՀ-ի և պետ. տուրքերի հաշվին, ինչը հաջորդեց օգտակար հանածոների արտահանման համար նոր տուրքի սահմանմանը: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմեց 5 տոկոս՝ պայմանավորված ընթացիկ ծախսերով: ՀՆԱ-ի նկատմամբ պետական պարտքը նվազեց՝ նախորդ տարվա 67.4 տոկոսից 2021 թ. վերջին կազմելով 63.4 տոկոս:

Արտաքին հաշվեկշիռը բարելավվեց՝ պայմանավորված ներմուծման նկատմամբ արտահանման ավելի արագ վերականգնմամբ և դրամական փոխանցումների կտրուկ աճով: Օտարերկրյա Ուղակի Ներդրումները (ՕՈՒՆ) ևս վերականգնվեց, թեև ցածր բազայից: 2021 թ. կեսին քաղաքական անորոշության նվազումից հետո փոխարժեքը կայունացավ և 2022 թ. փետրվարին հասավ նախաքաղաքական մակարդակին: Սակայն Ուկրաինայում պատերազմի սկիզբը նոր տատանողականություն բերեց:

Ազգային աղբատության բացարձակ մակարդակը բարձրացավ՝ 2019 թ. 26.4 տոկոսից 2020 թ. կազմելով 27 տոկոս: Սոցիալական պաշտպանության առկա մեխանիզմները (կենսաթոշակներ և Ընտանեկան նպաստների ծրագիր) կարևորագույն բուֆեր ապահովեցին՝ կանխելով աղբատության առավել աճը:

Աղյուսակ 1	2021թ..
Բնակչություն, միլիոն	2.9
ՀՆԱ, ընթացիկ մլրդ. ԱՄՆ դոլար	13.9
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ընթացիկ ԱՄՆ դոլար	4,670
Աղբատության միջին մակարդակ (1.9 դոլար) ^ա	0.4
Ցածր շեմի միջին եկամտով երկրների աղբատության մակարդակ (3.2 դոլար) ^ա	6.9
Բարձր շեմի միջին եկամտով երկրների աղբատության մակարդակ (5 դոլար) ^ա	44.7
Ձիկի գործակից	25.2
Տարրական դպրոցներում ընդգրկվածություն (% համախառն) ^բ	91.8
Կյանքի սպասվող տևողությունը ծննդից, տարի ^բ	75.1
Ձերմոցային գազերի ընդհանուր արտանետումներ (մտCO2համ.)	9.5

Աղբայրները՝ ՀՅԾ, Մակրո աղբատության հեռանկարը և պաշտոնական տվյալներ.
(ա) Վերջին արժեքը (2020), 2011թ. գնողունակության համարժեքով
(բ) Վերջին ՀՅԾ արժեքը (2019)

Ուկրաինայում պատերազմի և Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների ազդեցությունը հավանական է, որ նշանակալի լինի՝ հաշվի առնելով Ռուսաստանի հետ Հայաստանի ամուր տնտեսական կապերը: Տնտեսությունը 2021 թ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 5.7 տոկոսով վերականգնվեց, սակայն կանխատեսվում է, որ 2022 թ. նախորդ տարվա համեմատ աճը կկազմի սոսկ 1.2 տոկոս, ընդ որում՝ նվազման բարձր ռիսկերի ենթակա անորոշ հեռանկարով: Աճի և դրամական փոխանցումների ավելի ցածր ցուցանիշները հավանական է, որ աղբատության նվազեցման ընթացքը դանդաղեցնեն և խոցելիությունն ավելացնեն:

Մակրոտնտեսական շրջահայաց քաղաքականությունը, այդ թվում՝ գնաճի նպատակադրման ավելի արդյունավետ համակարգը, հարկաբյուջետային հուսալի կանոնը, ֆինանսական ոլորտի առողջ վերահսկողությունը և մրցակցությանը միտված բարեփոխումները Հայաստանին օգնեցին 2020 թ. զույգ ճգնաժամերին դիմակայելու հարցում, ընդ որում՝ աղբատության մակարդակի աճը սպասվածից ցածր էր:

Թեև 2021 թ. կեսին կայացած արտահերթ ընտրություններից հետո ներքին քաղաքական անորոշությունը տեղի տվեց, Հայաստանի առջև դեռևս ծառանում են կառուցվածքային նշանակալի սահմանփակումներ, ինչպիսիք են՝ թույլ հաղորդակցությունը, փակ սահմանները և տնտեսական հարաբերությունների բացակայությունը իր չորս հարևաններից երկուսի հետ, և բարձր գործազրկության, հմտությունների անհամապատասխանության և ընկերությունների մրցունակության հետ կապված մարտահրավերները:

Վերջին զարգացումները

Հայաստանի տնտեսությունը, 2020 թ. 7.4 տոկոսով նախորդ տարվա նկատմամբ կրճատվելուց հետո, 2021 թ. սկսեց վերականգնվել՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 5.7 տոկոսով: Աճն ապահովվեց մասնավոր և պետական սպառման հաշվին՝ ներդրումների և զուտ արտահանման ավելի փոքր նպաստումով:

Արտադրության մասով՝ 2020 թ. կտրուկ անկումից հետո ծառայությունները վերականգնվեցին, իսկ արդյունաբերության և շինարարության նպաստումը աճին համեստ էր: Գյուղատնտեսության ծավալները վեցերորդ տարին անընդմեջ կրճատվեցին՝ արտացոլելով չբարեփոխված հողի շուկաները, ոռոգման անհավասար հասանելիությունը և եղանակային փոխվող օրինաչափությունների դիմակայունության ցածր աստիճանը:

ՔՈՎԻԴ-19-ով վարակման հինգերորդ ավիքը Հայաստանում փետրվարի վերջին մեղմացավ: Դանդաղ մեկնարկից հետո 2021 թ. վերջին պատվաստումների տեմպը բարձրացավ, երբ աշխատողների համար սահմանվեց պատվաստման ապացույց ներկայացնելու կամ շաբաթական կտրվածքով թեստ հանձնելու պատահիր պահանջ:

Հեռանկարը

Ուկրաինա Ռուսաստանի ներխուժման ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա հավանական է, որ էապես բացասական լինի, թեև դրա մեծությունն անորոշ է մնում:

Հայաստանը Ռուսաստանի հետ ամուր տնտեսական կապեր ունի, ինչպիսիք են Հայաստանից արտահանման 28 և Հայաստանի ներմուծման 30 տոկոսը (2018-2021 թթ. միջին) բաժին է ընկել Ռուսաստանին, նաև Ռուսաստանը Հայաստան ներմուծվող ամբողջ ցորենի և գազի աղբյուրն է: 2021 թ. Ռուսաստանից կատարվող դրամական փոխանցումները կազմել են ՀՆԱ-ի 5 տոկոսը, զուտ ՕՌԸ պաշարի 41 տոկոսը կապված էր ռուսական սուբյեկտների հետ, իսկ Հայաստան ժամանած զբոսաշրջիկների ընդհանուր թվի 40 տոկոսը բաժին էր ընկնում ռուս զբոսաշրջիկներին: Բացի այդ, Հայաստանի վրա ազդեցություն կունենա նաև պարենային ապրանքների և վառելիքի համաշխարհային գների բարձրացումը, ընդ որում 2021 թ. ներմուծումների 9 տոկոսը բաժին է ընկել վառելիքին:

2022 թ. աճի կանխատեսվող ցուցանիշն իջեցվել է՝ նախապատերազմյան 5.3 տոկոսից 1.2 տոկոսի, ընդ որում ավելի ցածր դրամական փոխանցումներն ու իրական աշխատավարձերն ազդում են սպառման վրա, անորոշության ավելացումը՝ ներդրումների, իսկ արտահանման ծավալները կրճատվում

են՝ պայմանավորված Ռուսաստանի տնտեսության ծավալների կանխատեսվող կրճատմամբ և համաշխարհային ու տարածաշրջանային տնտեսական աճի տեմպի դանդաղմամբ: Արտադրության մասով կառուցվածքային մարտահրավերները շարունակելու են ծանրանալ գյուղատնտեսության վրա, արդյունաբերությունը անորոշության հետևանքով լուրջ ազդեցություն է կրելու, իսկ ծառայությունների տեմպը սպառման հետ մեկտեղ դանդաղելու է: Միջնաժամկետ հեռանկարում սպասվում է, որ աճը 2023 և 2024 թթ. կբարձրանա, սակայն ավելի դանդաղ տեմպով, քան կանխատեսվել էր նախքան պատերազմը:

Ավելի դանդաղ աճին համահունչ՝ եկամուտների հավաքագրման անկում և ծախսային ճնշումների ավելացում է սպասվում, մասնավորապես սոցիալական աջակցության ավելացման միջոցով, ինչը կհանգեցնի հարկաբյուջետային կոնսոլիդացիայի հետաձգմանը: ՍԱ իր հերթին 2022 թ. ավարտին պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը կմղի մինչև ՀՆԱ-ի շուրջ 67 տոկոսը՝ ավելի հեռացնելով օրենքով սահմանված սահմանաչափերից:


Ընթացիկ հաշվի պակասուրդի ընդլայնում է կանխատեսվում՝ պայմանավորված արտահանման և զուտ փոխանցումների նվազմամբ: Արտահանմանը կարող է խթանել զբոսաշրջության եկամուտների ավելացումը՝ կապված պատերազմի սկսելուց հետո Ռուսաստանի քաղաքացիների ներհոսքի հետ:

Ապրանքների ավելի բարձր գների հետևանքով 2022 թ. գնաճային բարձր ճնշումները կպահպանվեն, սակայն ՀՀ ԿԲ գնաճի նպատակադրմամբ ակնկալվում է, որ գնաճը կխարսխի միջնաժամկետ հեռանկարում, երբ արտաքին գնային ճնշումները տեղի տան :

Ելնելով կանխատեսվող մակրոտնտեսական ազդեցությունից՝ աղքատության ցուցանիշը (վերին միջին եկամուտ ունեցող երկրների աղքատության մակարդակով) 2022 թ. կարող է հասնել բնակչության 39.6 տոկոսին, ինչը 3 տոկոսային կետով բարձր է պատերազմի բացակայության հակափաստական սցենարի համեմատ: Խոցելիությունը կարող է աճել՝ պայմանավորված դրամական փոխանցումների նվազմամբ, կոմունալ վճարների բարձրացմամբ և սննդամթերքի գների աճով:


Կանխատեսումն անորոշ է, հնարավոր են իջեցումներ՝ հաշվի առնելով համաշխարհային և տարածաշրջանային ձևավորվող միջավայրը: Ռիսկերի թվում են՝ Ուկրաինայում ձգձգվող հակամարտությունը, Ռուսաստանում աճի տեմպի տևական և ավելի զգալի դանդաղումը, համաշխարհային ապրանքային շուկաներում հետագա խաթարումը և ՀՀ սահմաններին շուրջ դեռևս չլուծված աշխարհաքաղաքական խնդիրները: Դիտարկելով դրական կողմերը՝ Ռուսաստանից մարդկանց ներհոսքը, պահպանվելու դեպքում, տնտեսության վրա կարող է դրական ազդեցություն ունենալ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. Հայաստան / ՀՆԱ աճը, հարկաբյուջետային և ընթացիկ հաշվի հաշվեկշիռները



Աղբյուրները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ կենտրոնական բանկ, Համաշխարհային բանկի աշխատակիցների կանխատեսումներ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. Հայաստան / Աղքատության փաստացի և կանխատեսվող մակարդակը և մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ն



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ Ցանկը՝ LMIC և UMIC ցածր (բարձր-) շեմի միջին եկամտով երկրների աղքատության մակարդակին են վերաբերում:

ԱՂՅՈՒՄԱԿ 2. Հայաստան / Մակրո աղբատության հեռանկարի ցուցանիշներ (տարեկան տոկոսային փոփոխությունը, եթե այլ բան նշված չէ)

	2019	2020	2021գ	2022 կ	2023 կ	2024 կ
Իրական ՀՆԱ-ի աճ հաստատուն շուկայական գներով	7.6	-7.4	5.7	1.2	4.6	4.9
Մասնավոր սպառում	11.5	-13.8	3.4	-1.3	5.4	5.7
Կառավարության սպառում	12.9	15.2	5.0	-1.2	1.7	1.0
Հիմնական կապիտալի համախառն ներդրումներ	4.4	-8.6	7.7	-0.9	7.5	9.1
Արտահանում, ապրանքներ և ծառայություններ	16.0	-33.4	16.5	-8.5	6.5	7.7
Ներմուծում, ապրանքներ և ծառայություններ	11.6	-31.4	10.9	-12.0	8.0	9.3
Իրական ՀՆԱ-ի աճ, հաստատուն գործոնային գներով	7.7	-7.1	5.4	1.2	4.6	4.9
Գյուղատնտեսություն	-5.8	-4.1	-1.4	0.2	0.8	1.0
Արդյունաբերություն	10.5	-3.0	3.8	-1.1	2.9	3.1
Ծառայություններ	9.7	-9.8	7.9	2.6	6.2	6.5
Գնաճ (սպառողական գների ինդեքս)	1.4	1.2	7.2	9.8	7.5	6.8
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	-7.4	-3.8	-3.3	-3.7	-4.9	-5.4
Չուտ օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՀՆԱ-ի %)	1.7	0.6	2.6	1.6	1.8	2.3
Բյուջետային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	-0.8	-5.1	-4.3	-5.8	-4.9	-3.3
Պարտք (ՀՆԱ-ի %)	53.7	67.4	63.4	66.9	67.6	66.6
Առաջնային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	1.6	-2.4	-1.7	-3.0	-2.0	-0.4
Աղբատության միջազգային մակարդակ (1.9 դուլար 2011թ. գնողունակության համարժեքով) ^{ա,բ,գ}	1.1	0.4	0.3	0.2	0.2	0.2
Ցածր շեմի միջին եկամտով երկրների աղբատության մակարդակ (3.2 դուլար 2011 թ. գնողունակության համարժեքով) ^{ա,բ,գ}	9.9	6.9	5.7	5.4	4.8	4.0
Բարձր շեմի միջին եկամտով երկրների աղբատության մակարդակ (5.5 դուլար 2011 թ. գնողունակության համարժեքով) ^{ա,բ,գ}	44.0	44.7	40.4	39.6	36.2	32.7
Ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումներ (մտCO2 համ.)	6.4	-10.9	9.5	5.2	7.8	7.2
Էներգակիրների հետ կապված ջերմոցային գազերի արտանետումներ (ընդհանուրի %)	62.9	61.1	64.8	65.4	66.5	67.4

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Աղբատության և հավասարության ու Մակրոէկոնոմիկայի, առևտրի և ներդրումների գլոբալ պրակտիկաներ Ծանոթ. գ = գնահատական, կ = կանխատեսում:
 (ա) Հաշվարկները հիմնված են «ECAPOV»-ի ներդաշնակեցման վրա՝ 2020 թ. ԿԱՀ օգտագործմամբ: Փաստացի տվյալներ՝ 2020 թ., փաստացի տվյալների հիման վրա հաշվարկներ՝ 2021 թ.: Կանխատեսումներն ընդգրկում են 2022 -ից 2024 թթ.-ը:
 (բ) Կանխատեսումը՝ չեզոք բաշխվածության կիրառմամբ (2020), ծախսերի փոխանցումը գների (pass-through) = 0.87՝ հիմնվելով հաստատուն տեղական արժույթի միավորով արտահայտված մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի վրա:
 (գ) 2019 և 2020 թթ. աղբատության մակարդակները ճշգրիտ համադրելի չեն 2018 թ. հետ՝ պայմանավորված 2019 թ. սկսած ԿԱՀ վերանայումներով: